

ՀՀ Լոռու մարզի խորհրդի նիստի

28.11.2017թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին՝
Մարզի խորհրդի անդամները**

Հրավիրված էին՝

Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանը, Հ.Թադևոսյանը, Տ.Բադոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները, ՀԳՄՏԾ ղեկավարները, լրատվության, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Տեղական ինքնակառավարման ոլորտում ՀՀ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվելիք աշխատանքների մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյան)

15 րոպե

2. Մարզի համայնքների 2017 թվականի բյուջեների 10 ամիսների սեփական եկամուտների կատարման և 2018 թվականի բյուջեների կազմման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյան)

15 րոպե

3. Մարզի համայնքներում 2017 թվականի երրորդ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին.

(Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ - Ա. Սահակյան)

15 րոպե

4. Հայտարարություններ.

Լ. Ասլանյան - ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական.

Հ. Մկրտչյան - ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ:

Ա ն ա ջ ա ր կ վ ե ց

ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշները կատարելու ուղղությամբ:

2. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և միջոցներ ձեռնարկել տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերվող ՀՀ Օրենսդրության պահանջները կատարելու ուղղությամբ:

3. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և պահպանել ու կատարել օրենսդրության պահանջները վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումներն ու բացթողումները բացառելու նպատակով:

4. Համայնքների կանոնակարգերը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատել և ներկայացնել մարզպետարան:

5. Համայնքների 2018թ-ի բյուջետային գործընթացը իրականացնել սահմանված կարգով, ռեալ և իրատեսական բյուջեներ կազմելու նպատակով կազմակերպել հանրային, մասնակցային և թափանցիկ քննարկումներ՝ գործընթացին ներգրավելով նաև հասարակական կամ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին և ազգաբնակչությանը:

6. Սահմանված ժամկետներում խոշորացված համայնքներում կազմակերպել համայնքի զարգացման 5-ամյա ծրագրերի քննարկումներ, ներկայացնել ավագանու հաստատմանը և մարզպետարան տրամադրել համապատասխան տեղեկատվություն:

7. Մինչև ս.թ. դեկտեմբերի 30-ը մարզպետարան ներկայացնել «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի շահառուների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ